ՀՀ հատուկ քննչական ծառայություն

Հաղորդում ներկայացնող անձ՝
Մարինա Հրանտի Պողոսյան,

30.07.2019թ.

Հաղորդում հանցագործության մասին

1. Մարինա Հրանտի Պողոսյանս հանդիսանում եմ ՀՀ քաղաքացի, “Վելես” իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ:
2. 2016թ. հուլիսի 28-ին թիվ 14149815 ինձ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ուրիշի գույքը առանձնապես խոշոր չափով յուրացնելու համար: Նշված քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան և ստացել ԵԱՔԴ/0239/01/16 համարը:
3. Քրեական գործի նյութերին ծանոթանալու արդյունքում ինձ հայտնի է դարձել, որ 2015թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության պետի 1-ին տեղակալ Հունան Պողոսյանը Մարինա Հրանտի Պողոսյանի՝ Երևան քաղաքի Դեմիրճյան 12/14 շենքի 36 բնակարանում և Երևան քաղաքի Իսահակյան 38 հասցեում գտնվող “Բասկին Ռոբինս” բառ-սրճարանում “Ներքին դիտում” օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելը թույլատրելու մասին միջնորդություն է (այսուհետ նաև՝ միջնորդություն) ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ դատարան), որը դատարանի կողմից նախագահությամբ Ռուբեն Վարդազարյանի նույն օրը քննության է առնվել և բավարարվել է:
4. 29.03.2017թ. քրեական գործով իմ պաշտպանը՝ Լիպարիտ Սիմոնյանը դիմում է ներկայացրել դատարան (Ռուբեն Վարդազարյանին)՝ խնդրելով տրամադրել 11.09.2015թ. կայացված՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելը թույլատրելու մասին որոշման օրինակը և դատական նիստի ձայնային արձանագրության կրիչը: Շուրջ երկու ամիս մեր դիմումին պատասխան չստանալուց հետո՝ 05.06.2017թ. դիմել եմ դատարան՝ կրկին պահանջելով տրամադրել նշված որոշման օրինակը: Միայն 30.06.2017թ. դատարանը պատասխանել է մեր դիմումին և 07.07.2017թ. ես ստացել եմ վերը նշված որոշման օրինակը, իսկ նիստի ձայնային արձանագրության կրիչի տրամադրումը մերժվել է:
5. 18.07.2017թ. դատարանի գրության համաձայն 11.09.2015թ. “ներքին դիտում” օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու թույլտվություն ստանալու միջնորդության քննությունը տեղի է ունեցել 11.09.2015թ. ժամը 12:45-13:00-ն:
6. “Բասկին Ռոբինս” սրճարանը, որում դատարանի կողմից թույլատրվել է իրականացնել “ներքին դիտում” օպերատիվ-հետախուզական միջոցառումը, երբևէ չի հանդիսացել իմ ժամանցի վայրը և ես այդ սրճարան որևէ անգամ մինչև 11.09.2015թ. չեմ այցելել: Նշված սրճարանը, որպես թիվ 14149815 քրեական գործով տուժող ճանաչված Արփի Մերասի հետ

հանդիպման վայր ընտրել եմ ես, նույն օրը՝ 11.09.2015թ. և ընտրել եմ շատ պատահական կերպով՝ ուղղակի գտնվելով դրա կողքին և “սms” հաղորդագրության միջոցով Արփի Մերասին առաջարկելով հանդիպել հենց այնտեղ: Նշված սրճարանում հանդիպելու պայմանավորվածությունը ձեռք է բերվել Արփի Մերասի հետ ժամը 14:22-ին (“սms” հաղորդագրություն ուղարկելու հստակ ժամը ամրագրված է բջջային կապի օպերատորից ստացված վերծանման մեջ):

7. Նշված հանգամանքները համադրելով իրար հետ՝ փաստում եմ, որ 2015թ. սեպտեմբերի 11-ին, ժամը 12:45 (միջնորդության քննության դատական նիստի սկիզբ) դրությամբ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Հունան Պողոսյանը չէր կարող որևէ տվյալ ունենալ իմ՝ “Բասկին Ռոբինս” բառ-սրճարանում Արփի Մերասի հետ հանդիպում նշանալու և նույնիսկ առհասարակ այդ սրճարանում գտնվելու հավանականության կամ նպատակի մասին, ուստի ակնհայտ է, որ միջնորդությունը կազմվել և դատարան է ներկայացվել ավելի ուշ: Նշված հանգամանքը վկայում է նաև այն մասին, որ դատարանի 11.09.2015թ. որոշումը ևս իրականում կայացվել է հետին թվով, այսինքն՝ “Բասկին Ռոբինս” բառ-սրճարանում օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելուց հետո միայն: Վերջին հանգամանքի մասին անուղղակիորեն վկայում են նաև այն հանգամանքները, որ 11.09.2015թ. կայացված որոշումը 29.03.2017թ. պահանջելուց հետո մեզ է տրամադրվել 3 ամիս անց՝ 30.06.2017թ. (դատարանի գրության թվագրման ամսաթիվ), ինչպես նաև այն, որ նշված որոշման մեջ ակնհայտորեն ջնջում/ուղղում կատարելու միջոցով է կատարված 11.09.2015թ. դատական նիստի ամսաթվի վերաբերյալ գրառումը:

Հիմք ընդունելով սույն հաղորդման մեջ նշված փաստական հանգամանքները, հաշվի առնելով այն, որ դրանք առերևույթ պարունակում են Հ.Պողոսյանի կողմից ենթադրաբար հետին թվով օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելը թույլատրելու միջնորդություն կազմելու/դատարան ներկայացնելու և Ռ.Վարդազարյանի կողմից ենթադրաբար հետին թվով օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելը թույլատրելու մասին որոշում կայացնելու վերաբերյալ տեղեկատվություն՝

խնդրում ենք

հարուցել քրեական գործ և միևնույն ժամանակ Մարինա Պողոսյանին այդ գործով ճանաչել տուժող:

Հաղորդում ներկայացնող անձ՝ Մարինա Պողոսյան